



सत्यमेव जयते

**Հնդկաստանի դեսպանություն  
Երևան**

\*\*\*

**ԿԱԴՐԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ**

ՀՀ-ում Հնդկաստանի դեսպանությունը շահագրգիռ թեկնածուներին հրավիրում է դիմել **<ՏԵՂԱՅԻ ԳՈՐԾԱՎԱՐ>** թափուր տեղի համար: Դիմումներ կարող են ներկայացնել այն շահագրգիռ թեկնածուները, որոնք խստորեն համապատասխանում են մասնակցության իրավունքի հետևյալ որակավորման չափանիշներին՝

**Մասնակցության իրավունք**

Կրթության նվազագույն որակավորում՝ ԲՈՒՀ-ի շրջանավարտ՝ անգլերենի, հայերենի և ռուսերենի գերազանց իմացությամբ:

Տարիք՝ նվազագույնը 28 տարեկան, լեզուների հիանալի իմացությամբ՝ անգլերեն (գրավոր և բանավոր), հայերեն և ռուսերեն:

Համակարգչի աշխատանքային տիրապետում, Word-ում, Excel-ում և այլն. արագ մուտքագրումն ու ծրագրերի օգտագործումն էական է:

Աշխատանքային փորձ - առնվազն 3-5 տարի (գերադասելի է դիվանագիտական/միջազգային կազմակերպություններում)

Նախապատվություն կտրվի այն թեկնածու(ներ)ին, որոնք ունեն վարչական աշխատանքի և հասարակայնության հետ կապերի համապատասխան փորձ:

**Պարտականությունները**

Պարտականություններն են տարբեր վարչական, հյուպատոսական և դրանց առնչվող այլ աշխատանքների կատարում դեսպանատանը: Բացի այդ, կպահանջվի նպաստել Հնդկաստանի դեսպանության գործունեությանը և ժամանակ առ ժամանակ կատարել իրենց հանձնարարվող լրացուցիչ պարտականություններ:

Շահագրգիռ դիմորդները կարող են ուղարկել իրենց դիմում / Ինքնակենսագրականները՝

ՀՀ-ում Հնդկաստանի դեսպանություն  
Գրասենյակի ղեկավարին  
Հայաստան, Երևան, Զորավի փող. 50/2

Ինչպես նաև հետևյալ էլ.հասցեներով՝

- [ambassador@embassyofindia.am](mailto:ambassador@embassyofindia.am) ,
- [hoc@embassyofindia.am](mailto:hoc@embassyofindia.am)
- [hoc.yerevan@mca.gov.in](mailto:hoc.yerevan@mca.gov.in) , և
- [administration@embassyofindia.am](mailto:administration@embassyofindia.am)

դիմումների վերջնաժամկետ՝ ս.թ. դեկտեմբերի 24